

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ**

Հայաստանի քիմիական հանդես 66, №3, 2013 Химический журнал Армении

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐԺԱՆՈՎ

2013թ. հուլիսի 31-ին կյանքից հեռացավ աշխարհից հայ գիտնական, այրման մասին գիտության դասական, “Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ և կառուցվածքային մակրոկինետիկա” գիտական նոր ուղղության հիմնադիր, ՌԴ ԳԱ ակադեմիկոս և ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ալեքսանդր Գրիգորի Մերժանովը:

Ա.Գ. Մերժանովը ծնվել է 1931թ. նոյեմբերի 27-ին, Դոնի Ռոստովում, Նոր-Նախիջևանցի հայերի ընտանիքում: 1949-1954թթ. ուսանել է Դոնի Ռոստովի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում: 1954թ. ընդունվել է աշխատանքի այն ժամանակ արդեն հայտնի ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, ապագա Նոբելյան մրցանակակիր ակադեմիկոս Ն.Ն. Սեմյոնովի մոտ և զբաղվել պայթուցիկ նյութերի բոցավառման ու այրման պրոցեսների ուսումնասիրությամբ: 1959թ. թեկնածուական թեզը պաշտպանելուց հետո նա տեղափոխվել է ինստիտուտի նոր բացված մասնաճյուղ, որը գտնվում էր Մոսկվայի մարզի Չեռնոգոլովկա ավանում: 1967թ. Մերժանովը պաշտպանեց դոկտորական թեզը՝ “Պինդ համակարգերում այրման և պայթման ջերմային տեսություն” վերնագրով, որը նպաստեց պայթուցիկ լիցքերի տեխնոլոգիայի զարգացմանը և լայն ճանաչում գտավ գիտական հասարակության շրջանում:

1967թ. նա համահեղինակների հետ հայտնաբերեց մի նոր երևույթ, որն անվանվեց ‘պինդ բոց’: Այս հայտնագործության հիմքի վրա ձևավորվեց անօրգանական դժվարահալ նյութերի և միացությունների ստացման մի նոր, ուրույն եղանակ, որն անվանվեց բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ (ԲԻՍ պրոցես): Այն հաստատվեց որպես նոր գիտական ուղղություն՝ հիմնված այրման տեխնոլոգիաների և նյութաբանության վրա: Հաշվի առնելով այդ նոր ուղղության գիտական ու կիրառական մեծ հեռանկարները, ԽՍՀՄ կառավարության և ԳԱ նախագահության որոշմամբ 1987թ. հիմնադրվեց ԽՍՀՄ ԳԱ Կառուցվածքային մակրոկինետիկայի և նյութաբանության ինստիտուտը (ԻՍՄԱՆ), որի երկարամյա տնօրենը, իսկ վերջին տարիներին գիտական ղեկավարը Ա.Գ. Մերժանովն էր:

Ա.Գ. Մերժանովը մեծ ջանքեր գործադրեց գիտության այս նոր ու հեռանկարային բնագավառում Հայաստանից երիտասարդ կադրեր ներգրավելու գործում: Նրա ակտիվ գործունեության շնորհիվ արդեն 1969թ. Երևանում անցկացվեց այրման և պայթման պրոցեսներին նվիրված երկրորդ համամիութենական գիտաժողովը, որի ընթացքում նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի կառավարության ու Ակադեմիայի ղեկավարության հետ՝ ուսանողներ, ասպիրանտներ ու երիտասարդ գիտնականներ ուղարկել Չեռնոգոլովկա, ԲԻՍ բնագավառում համապատասխան գիտելիքներ ու աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով: Գնահատելով այս նոր գիտական ուղղության դերը Հայաստանում, Ա.Գ. Մերժանովի նախաձեռնություններին առաջինն արձագանքեց և պատրաստակամությամբ ընդառաջեց ակադեմիկոս Ա.Բ. Նալբանդյանը, ով այն ժամանակ գլխավորում էր Հայկ. ԽՍՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի լաբորատորիան: Նրանց սերտ համագործակցության արդյունքում արդեն 1972թ. Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում բացվեց ԲԻՍ բաժին, այնուհետև նաև նախագծային-տեխնոլոգիական բյուրո, որոնց գիտական ղեկավար նշանակվեց, հասարակական հիմունքներով, պրոֆեսոր Մերժանովը, իսկ Հայաստանը դարձավ Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ ԲԻՍ տեխնոլոգիան առաջին անգամ ներդրվեց արդյունաբերության մեջ: Ա.Գ. Մերժանովի նախաձեռնությամբ և գործուն աջակցությամբ 1973թ. Հայաստանում անցկացվեց “Այրման պրոցեսները քիմիական տեխնոլոգիայում և մետալուրգիայում” առաջին համամիութենական գիտաժողովը, իսկ 1975-1985թթ. պարբերաբար անցկացվեցին ԲԻՍ պրոցեսներին նվիրված համամիութենական հինգ դպրոց-սեմինարներ: Դրանք մեծապես նպաստեցին ոչ միայն Հայաստանի գիտնականների մասնագիտական փորձի և որակավորման բարձրացմանը, այլև նրանց ստացած գիտական ու գործնական արդյունքների լայն ճանաչմանը: Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում հայ գիտնականների մշակած նոր ինքնատիպ հետազոտական եղանակների և դրանց հիման վրա ստացված գիտական ու կիրառական արդյունքների բարձր գնահատականն արտահայտվեց նրանում, որ 1975թ. Հայաստանի կառավարության որոշմամբ Քիմիական ֆիզիկայի լաբորատորիան վերակազմավորվեց որպես Հայկ. ԽՍՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ: 2006թ.-ին, այնուհետև 2009թ.-ին Հայաստանում կազմակերպվեցին ու փայլուն կերպով անցկացվեցին Ա.Գ. Մերժանովի 75-ամյակին նվիրված և ԲԻՍ պրոցեսների հոբելյանական 10-րդ միջազգային գիտաժողովները՝ աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած հոշակավոր գիտնականների մասնակցությամբ:

Հայաստանի գիտական հասարակայնությունը և կառավարությունը բարձր գնահատեցին Ա.Գ. Մերժանովի անձնվեր և եռանդուն գիտական, մանկավարժական ու գիտա-կազմակերպչական գործունեությունը Հայաստանում: 1980թ. մի խումբ համահեղինակների հետ միասին նրան շնորհվեց Հայաստանի պետական մրցանակ՝ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) բարձր ջերմաս-

տիճանային տաքացուցիչների գործարանում մոլիբդենի դիսիլիցիդի ստացման արդյունավետ ԲԻՍ տեխնոլոգիայի ներդրման համար: 2004թ. Ա.Գ. Մերժանովն ընտրվեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, իսկ 2006թ. արժանացավ ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի:

Ներկայումս Ա.Գ. Մերժանովի գործը ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում շարունակում են երկու լաբորատորիաներ, որտեղ աշխատում են նրա բազմաթիվ աշակերտները՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Լ. Խառատյանի և պրոֆեսոր Ս.Կ. Դուլիսանյանի գլխավորությամբ: Ա.Գ. Մերժանովն «աճեցրել է» հայազգի բազմաթիվ բարձրակարգ մասնագետներ (6 դոկտորներ և մոտ 30 գիտության թեկնածուներ), որոնք աշխատում են ինչպես Հայաստանի տարբեր գիտական կենտրոններում (ԳԱԱ, ԵՊՀ, ՀՊՀՀ), այլև արտասահմանյան մի շարք առաջատար գիտական ու արտադրական կենտրոններում (ԱՄՆ, Ռուսաստան, Իսպանիա, Չինաստան, Հր. Կորեա և այլն):

Ա.Գ. Մերժանովը մի քանի մենագրությունների, ավելի քան 800 գիտական հոդվածների, 120 արտոնագրերի հեղինակ է գիտության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են այրման տեսությունը, քիմիական կինետիկան, նյութաբանությունը, այրումը և բոցավառումը կոնդենսացված ֆազում, ոչ գծային դինամիկան, երկրաֆիզիկան:

Կյանքից հեռացավ մեծ ուսուցիչ, գիտական ուղղության հիմնադիր և փայլուն անձնավորություն, որի ազնվությունը, հյուրասիրությունը, հմայքը և հումորի զգացումը գրավում էին ամենատարբեր մարդկանց. գիտնականների, գրողների, նկարիչների:

Ա.Գ. Մերժանովի՝ հռչակավոր գիտնականի, անսպառ եռանդով լեցուն և հայրենասեր մարդու հիշատակը միշտ կլուսավորի և կջերմացնի բոլոր նրանց հոգիները, ովքեր ճանաչել ու սիրել են նրան:

*ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք
«Հայկական քիմիական հանդեսի» խմբագրություն*